



# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Հանձնվում է ժամանակավոր կալանքի տակ գտնվող անձին՝ հետաքննության ընթացքում

Դուք ժամանակավոր կալանքի էք առնվել ազատությունների և կալանքի դատավորի կողմից Այս փաստաթուղթը հիշեցնում է այն հիմնական իրավունքները, որոնցից դուք օգտվելու էք եւ այն հիմնական տեղեկությունները, որոնք պետք է տրվեն ձեզ:

### Դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը ժամանակավոր կալանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում

#### **Օրենքի խախտման իմացությունը**

Դուք իրավունք ունեք իմանալ ենթադրյալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը եւ տեղը, որի համար ենթարկվել էք հետաքննության եւ ձեր ժամանակավոր ազատարարի մասն պատճառները:

#### **Իրավաբանի օգնության մասին**

Հետաքննության ամբողջ ընթացքում, կարող եք խնդրել ձեր սեփական ընտրություններ կամ ի պաշտոնե (ավտոմատ) նշանակված մի փաստաբանի, որ ձեզ օգնի:

Դուք կարող եք ազատ շփվել քանակավորում գրավոր կերպով ձեր իրավաբանի հետ, ու նա կարող է մասնակցել ձեր բոլոր լսումներին, որոնց մասին նրան պետք է տեղեկացնեք:

Եթե դուք անչափահաս եք, ու դուք կամ ձեր ընտանիքը չեք ընտրել մի փաստաբանի, վերջինս կնշանակվի ավտոմատ կերպով (դատարանի կողմից):

#### **Լռություն պահելու իրավունքը**

Ձեր լսումներին ընթացքում, դուք կարող եք կամ հայտարարություններ անել, կամ պատասխանել ձեզ տրվող հարցերին, կամ լռել:

#### **Թարգմանչի աջակցությունը**

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումներին եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով:

#### **Ձեր ազատման իրավունք խնդրելու մասին**

Ցանկացած ժամանակ, դուք կարող եք խնդրել քննչական դատավորին ձեզ ազատարձակել: Այդ խնդրանքը կվերանայվի վերջինիս ու ազատությունների եւ կալանքի դատավորի կողմից:

**Ազատագրկման տևողությունը**

Նախնական կալանքի տևողությունը կախված է, թե դուք չափահաս կամ անչափահաս եք, ու այն փաստերի առումով, որոնց համար ձեզ մեղադրում են, դրանք հանցանք կամ հանցագործություն հանդիսանում են թե ոչ, կախված է նաև դրանց ծանրությունից, ու արդյոք դուք արդեն դատապարտվել էք անցյալում թե ոչ :

Կալանքի տևողությունը ներկայացված է այն դատավորի որոշման մասին փաստաթղթում, ով ձեզ բանտարկել է :

Որոշ դեպքերում, ձեր ազատագրկման ժամկետը կարող է երկարացվել : Ժամկետի այդ հնարավոր երկարացումները կարող են որոշվել միայն մրցակցային -հակասական երկկողմանի հարցաքննումներից հետո, որի ընթացքում դուք և ձեր փաստաբանը կարտահայտվեք :

**Որոշ անձանց տեղեկացնելը**

Դուք իրավունք ունեք տեղեկացնել այն մարդկանց որոնց ցանկանում եք, հատկապես ձեր ընտանիքի անդամներին, այն մասին, որ ժամանակավոր կալանքի տակ եք գտնվում :

Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին :

**Բժշկական քննություն և մասին**

Դուք կարող եք խնդրել գննվել բժշկի կողմից :

**Ծանոթանալ ձեր անձանկան գործին**

Դուք իրավունք ունեք ստանալ ու քննչական գործի պատճենը ձեր փաստաբանի միջոցով : Քննչական դատավորը կարող է ընդդիմանալ գործի որոշ փաստաթղթերի տրամանը՝ տուժողներին, մեղադրվող անհատներին, նրանց փաստաբաններին, վկաներին, քննիչներին, փորձագետներին կամ դատական գործին օժանդակող ուրիշներին և անձանց դեմ ճնշում գործադրելու վտանգից խուսափելու համար :